Ծանուցում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու վերաբերյալ

ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 16-ի ««Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու և գույք ամրացնելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն ամրացված ավտոմեքենան հետ վերցնելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին ամրացնելու մասին» N 582-Ա որոշմամբ թույլատրվել է ընկերությանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «TOYOTA LC200 4.6 GAS» մակնիշի՝ 24,981.2 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով (թողարկման տարեթիվը՝ 2016 թվական, նույնականացման համարը՝ ITMHX05JX04126259, պետհամարանիշը՝ 500 OO 01) մարդատար ավտոմեքենայով (այսուհետ՝ գույք) վճարել Ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան թվով հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման դիմաց, և ընկերության կողմից ձեռք բերված բաժնետոմսերի մարման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան չափով նվազեցնել ընկերության կանոնադրական կապիտալը:

ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 16-ի N 582-Ա որոշման կատարումն ապահովելու նպատակով՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն օրենքով սահմանված կարգով նախաձեռնել է կանոնադրական կապիտալի նվազեցման գործընթաց, որի արդյունքում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ժողովի կողմից 2020թ. օգոստոսի 17-ին ընդունվել է կանոնադրական կապիտալի փոփոխման (նվազեցման) մասին որոշում, որի արդյունքում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը նվազում է 10,493,597.4 ՀՀ դրամով և կկազմի 10,840,639,243.2 ՀՀ դրամ:

Առարկությունների առկայության կամ բացակայության վերաբերյալ անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում տեղյակ պահել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին: